***1476. ԽԱՉՔԱՐ,** հենած է եկեղեցու հյուսիսային պատին, քիվին, թևերն շուրջը և ստորին մասում՝ ուղղացիկ և փորագիր 4 տող.*

ԱՅՍՄՉԱՆԱՒԾԵԱԼՄԵԱՄԲՆՅԱՐՄՉԱԿԱՆԿԱՆ
ԿՆԵԱԼՎԱՆՅՈՀՆՆՍՎՐԴՊՆՀՈԳՈՆՓՐԿՈՒԹԵ
ԹՎ. ՌԽԷ
ՍՐՆՇՆՍՈՒԼ ՈՒԽԱՆԻՆԷ

ԱՅՍ ԱՐՁԱՆ ԱԻԾԵԱԼ ԱՐԵԱՄ|ԲՆ ՅԱՐԱՐՉԱԿԱՆ, ԿԱՆ|ԿՆԵԱԼ Վ.Ա|ՅՆ ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱ|ՊԵՏ|ԻՆ ՀՈԳՈՅՆ ՓՐԿՈՒԹԵ.|. ԹՎ. ։ՌԽԷ։ (1598)։| ՍՐ. ՆՇԱՆՍ ՈՒԼՈՒԽԱՆԻՆ Է։

***1477. ԽԱՉՔԱՐ,** հենած է եկեղեցու հարավային պատին, քիվին 1 տող.*

ԱԾՈՂՈՐՄԻՏՐԱԾՅՏՈՒՐԻՆ    Ա̄Ծ. ՈՂՈՐՄԻ ՏՐ. ԱՍՏՈՒԱԾԱՑՏՈՒՐԻՆ։

ԱՅՍՏԵՂ ՀՆՈՒՄ ԵՂԵԼ ԵՆ ՆԱԵՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***1478. ԽԱՉՔԱՐԻ** վրա, որը կանգնած է եղել եկեղեցու հարավում, Ջոհրապի խաչքարի մոտ.*

Աստուծով մեք Ոհաննէս եւ եղբայրն իմ Դաւիթ կանգնեցաք զխաչերս բարեխաւս ծնողաց մերոց. Ի թվ. ։ՌԸ։ ։ՌԺ։ (1559, 1561)։

*Հրատ. Սմբատյանց, 604։ Լալայան, XIX, 12։*

***1479. ԽԱՉՔԱՐԻ** վրա, նախորդի մոտերքում.*

Այս է հանգիստ որդւոյ Աւագխանին։

*Հրատ. Ջալալյանց, 119։ Ալիշան, 71։*

***1480. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** վրա, որը դրված է եղել այժմյան եկեղեցու տեղում կանգնած նախկին եկեղեցու բեմի առաջ.*

Աւս հանգչի մարմին Սարգիս վարդապետի. ։Ռ։ (1551)։

*Հրատ. Սմբատյանց, 603, Լալայան, XIX, 11։*

***1481. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** վրա, նախորդի մոտ.*

Այս է հանգիստ Յովհաննէս վարդապետին, ։ՌԼԲ։ (1583)[1]։

Ծանոթ. *Յովհանը Ծարեցին է, որ ունի «Պատմութիւն Աղուանից» մատյանը.*

*Հրատ. Սմբատյանց, 603։ Լալայան, XIX, 11։*

## ԱՋԱՏ ԳՅՈՒՂ (ՆԱԽԿԻՆՈՒՄ՝ ԱՂՔԻԼԻՍԱ)

*Գյուղի հին անունն անհայտ է (Սմբատյանցն ու Ջալալյանցն էլ նախկին անունը սխալմամբ Ղարաքիլիսա են հիշատակում)։ Ընդարձակ, սակայն ներկայումս ավերված գերեզմանատան մեջ պահպանված XIII դարի մի քանի խաչքարերն ապացույց են բնակավայրի հնության (դրանցից մեկը մենք գտանք՝ 1288 թ. արձանագրությամբ (№ 1288), մեկն էլ հիշատակում է Սմբատյանցը՝ ։ՉԽԴ։ թվականով և Շահնշահի որդի Հասանի անվան հիշատակումով[2]։*

*Գյուղամիջում կիսավեր վիճակում մնում են ս. Աստվածածին եկեղեցին և գավիթը։*

---

[1] *Սմբատյանցը նշում է, որ եկեղեցու շուրջը կային ։Ձ։, ։Պ։ և ։Ջ։ թվականով խաչքարեր, այժմ չկան։ Սմբատյանց, 604։*

[2] *«Գեղարքունիք», էջ 628։*

*Դրանք դեռևս Լալայանի այցելած ժամանակ, 1910 թ. կիսավեր են եղել, արձանագրության քարերը թափված պատերի տակ, իսկ այժմ դրանք կորել են։ Համաձայն եկեղեցու և դավթի վրա եղած շինարարական երկու արձանագրությունների, դրանք շինվել են միաժամանակ՝ Յովհաննես վարդապետի և իր եղբորորդիներ Աթանաս ու Գրիգոր եպիսկոպոսների նախաձեռնությամբ։ Սակայն պահպանվել է մի երրորդ շինարարական արձանագրություն ևս, որի մեջ որպես շինող հիշատակված է Գիորգ անունը՝ Յոհաննեսի արձանագրությունից (1618) երեք տարի ուշ թվականով՝ 1621։ Հովանավորողների արձանագրությունները տեղավորված են շենքերի ակնառու տեղերում, գավթի մուտքի կիսակամար ճակատաքարի և եկեղեցու հարավային պատի վրա։ Դրանք ընդարձակ են և սնապարծ, իրենց իշխանական ծագման թվարկումով, որը հասցնում են մինչև Զաքարե և Իվանե սպասալարները։ Երրորդ՝ Գիորգի արձանագրությունը գրված է անարվեստ տառերով, մի երկարավուն քարի վրա և շինության ժամանակ ագուցվել է եկեղեցու ներսում, նրա հարավային պատի որմնամույթի մեջ. թվականը նշված է ։ՌՀ։, որը ելնելով գրչության ընդհանուր ոճից, մենք սխալ ենք համարում, պիտի վերծանել ։ՌՀ։ Գիորգիին այս բոլորի հիման վրա համարում ենք շենքերի ճարտարապետը, իսկ կառուցումների ավարտման ժամանակը՝ 1621 թ.։*

*Ներկա ժողովածուում այս գյուղից ամփոփված են 14 արձանագրություն, որոնցից նախկինում հրատարակված են եղել 7-ը։*

***1482. ԽԱՉՔԱՐ**, մեծ, սալանման, գլուխը կամար և երեսին երկու խաչ. գտնվում է եկեղեցուց 50—60 մետր դեպի հարավ արևելք՝ հին գերեզմանատան պատի տակ. խաչերից վերև և ներքև 6 տող.*



**Թվ. ՉԼԷ. (1288) ՅԱՆՈՒՆ ՏԱՅ. | ԵՍ ՄԽԻԹԱՐ, ՀԱՅՐԱՏՈՒՆ, ՀԱՅՐԱ|ՆՈՒՆ ԿԱՆԳՆԵՑԱՔ ՋՍԲ. ՆՇԱՆՍ Ի ՓՐԿՈՒԹԻ. | ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿ ՁԱԽԱԿԱՑ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ԽԱՉԻՍ ՔԻ. ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ։**

Ծանոթ. *Խաչքարի վերին աջ կողմը ջարդված է, այդ պատճառով էլ սկզբի երեք տողերի վերջին մասերից մի քանի տառ պակաս են։ Թերի է մնում միայն երկրորդ տողի վերջին բառը, որը անձնանուն պիտի լինի և մենք վերականգնում ենք ՀԱՅՐԱՆՈՒՆ։*

*5-րդ տողի մեջ բաց տեղում երկու տառերի հետքեր կան, ենթադրում ենք, որ-նույն գրիչն է ջնջել։*

*Վերջին փակագիրը միանուն պիտի լինի և կազմողինը, թերևս, ՍՏԵՓԱՆ։*

Լալայեն. 308

1483. *ԽԱՉՔԱՐ, մեծ, ընկած է գետակի հունի մեջ, նախորդից ոչ հեռու, թևին միայն թվականը, 1 տող.*

ՌՁՀԵ

Թ̅Վ̅. :ՋՀԵ: (1526):

1484. *ԳԱՎԹԻ հարավային մուտքի կամարակալ քարի վրա, արտաքուստ, շինարարական արձանագրությունը 6 տող.*



Ի Թ̅Վ̅. :ՌԿԷ: (1618)| Ի ԹԱ-ԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՅԱԲԱՋ ՇԱ-ՀԻՆ ԵՒ ՊԱՐՈՆ|ՈՒԹԵԱՆ ԱՄԻՐԽԱՆ ՍՈՒԼԹԱՆԻՆ. Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՅԱՂ-ՎԱՆԻՑ ՏԷՐ| ՅՈՎՀԱՆՆԻՍԻ, ԿԱՄԱՒՆ ԱՑ. ԵՍ ՅՈՀԱՆՆԷՍ ՆՈՒԽԱՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՇԻ-ՆԵՑԻ| ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ՓՐԿՈՒ-ԹԻՒՆ ՀՈԳՒՈՑ ԻՄՈՑ ԵՒ ԿՐԿՆԱԿ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ.| ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՑԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ ԱՌ ՔՈ:

*Հրատ. Ջալալյանց, Բ, 113։ Ալիշան, 73։ Սմբատյանց, 628։ Լալայան, XIX, 28։ Բոլորի մոտ էլ պակասում է առաջին տողը՝ թվականը։*

Լուսանկ. 304

1485. *ԵԿԵՂԵՑՈՒ հարավային որմնասյան մեջ ագուցված կոթողանման քարի վրա, ներքուստ, 3 տող.*

Ի ԹՈՀԷՐ
ԵՍԳԻՈՐԳՇԻՆԵՑԻՂԵԿԵ
ՂԵՑ

Ի Թ̅Վ̅. :ՈՀ: (1621) ԷՐ.| ԵՍ ԳԻՈՐԳ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵ|ՂԵՑ[Ի]Ս[]:

Ծանոթ. *Թվականի հարյուրավորը ըստ գրչության ոճի պիտի լինի «Ռ»։ Գրչի սխալմունք է կամ մաշվածության հետևանք։ Արձանագրությունը համարում են շենքի ճարտարապետի հիշատակագրությունը։*

1486. *ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային կողմի լուսամուտի միակտոր քարի վրա, արտաքուստ, 6 տող.*

ՍԲԽՆՍԲԱՐԽՍ
ՔԵՐ ԻՄ
ՓԱՐ ԻՆ
Ի Թ̅Վ̅ Ռ̅Կ̅Թ̅
ՏՐ Ա̅Ծ̅ . . . ՅՀ
ԱՆՆ

Ս̅Բ̅. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ| ՔԵՐ ԻՄ ՓԱՐԻՆ.| Ի Թ̅Վ̅. :ՌԿԹ: (1620): ՏՐ. Ա̅Ծ̅. ...ՅՈՎՀԱՆՆ[Է]Ս[]:

Ծանոթ. *Երկրորդ տողում ՔԵՐԻՄ համարում ենք գրչի սխալ, նկատի առնելով հաջորդ կանացի անունը և ուղղում՝ ՔԵՌ ԻՄ։*

*Հավանական է, որ եկեղեցին շինող Հովհաննես վարդապետն է իր քրոջ հիշատակին դնել տվել պատուհանի քարը և հիշատակագրել։*



24—619

**1487.** ԿՈԹՈՂ, *քառակուսի, կանգնեցրած է եկեղեցու կամարին, ագուցված մի սալաքարի վրա։ Բոլոր երեսներին խաչեր և տակերին արձանագրություն. սկիզբը արևելքից 4 տող.*

ՍԲՆՇԱՆՍԲՐԽԱԽՍ
ՅԱԹՆՍԵՊՍ
ԻՆԳՐԻԳՐԵՊՍՆ
ԹՎՌՂԲ

ՍԲ. ՆՇԱՆՍ ԲԱՐԵԽԱԽՍ| ՅԱԹԱՆԱՍ ԵՊԻՍ|ԿՈՊՈՍԻՆ, ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ|. ԹՎ. ՌՂԲ: (1643):

*Հրատ. Ջալալյանց, Բ, 113։ Ալիշան, 74։ Սմբատյանց, 628։ Լալայան, XIX, 29։ Թվական ունի միայն Լալայանը։*

**1488.** ԵԿԵՂԵՑՈՒ *բեմի կամարի մեջ ագուցված փոքր խաչքարի վրա 3 տող.*

| | |
|---|---|
| ՏՐ | ԱԾ |
| ՅՀ | ԱՆԷՍ |
| ՎԴ | ՊՏԻՆ |

ՏՐ. ԱԾ.| ՅՈՎՀԱՆԷՍ| ՎԱՐԴԱՊԵՏԻՆ:

*Ծանոթ. Եկեղեցին շինողի հիշատակությունն է։*

**1489.** ԵԿԵՂԵՑՈՒ *քառակուսի վիմաքարի արևմտյան երեսին, խաչի շուրջը. 3 տող.*

ՍԲ
ԽՉՍԲԱՐԷԽՍ
ԽԱԹՈՒՆԻՆ

ՍԲ.| ԽԱՉՍ| ԲԱՐԵԽԱԽՍ| ԽԱԹՈՒՆԻՆ:

**1490.** ԵԿԵՂԵՑՈՒ *քառակուսի վիմաքարի արևմտյան երեսին, նախորդից ներքև 6 տող.*

| | |
|---|---|
| ՍԲ | ԽՉՍ |
| ԲԱՐԷ | |
| ԽԱՍՄ | |
| ՈՒՐ | |
| ԱՄ | |
| ԻՆ | |

ՍԲ. ԽԱՉՍ| ԲԱՐԵ|ԽԱՒՍ ՄՈՒՐ|ԱՄ|ԻՆ:

**1491.** ԽԱՉՔԱՐ, *մեծ, գեղաքանդակ, գտնվում է եկեղեցուց 50 մետր արևմուտք՝ գետի աջ ափին, հին գերեզմանատան մեջ, ճակատի շրջանակներին ռելիեֆ տառերով և Թիկունքին փորագրված 17 տող.*



ԱՅՍ ԱՐՁԱՆ ՆԵՐԿ|ԵԱԼ ՅԱՐԵԱՄԲՆ ՓՐԿՉԻՆ, ԿԱՆԳՆ|ԵԱ|Լ Վ|Ա|Ս|Ն| ԱՐԻՍՏԱԿ|Է|Ս| ՔԱՀԱՆԱՅԻ ՀՈԳՈՅՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ|։ ՋԱՆԱՐԺԱՆ ԲԱՂ-

ՏԱՍԱՐ ՄԵԼԻՔՊԵԿ ԿԱԶՄԵՑ| ԹՎԻՆ :ՌՃԷ: (1658)|. Ի ԿԱՄԱՒՈՐՈՒԹԵՆ ԱՑ. ԵՒ ՀՈԳԵԲԱՐՁՈՒԹԵՆ ԳՐԻԳՈՐԻ| ՔՈՋ ՐԱԲՈՒՆԻՑ, ՀՕՐ|ԵՂԲՕՐ ՄԵՐՈՑ ԵՍ. ՆՈՒԱՌՏ ՆԵՐՍԵՍ ԵՐԵՑՍ ԵՒ ԵՂԲԱՅՐ|Ս ԻՄ ՊԱՂԻ, ՈՐԴԻՔ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՀԱՆԱ|ԻՆ. ՈՐԴՈՑ ԽՈՒՄԱ ՔԱՀԱՆԱՅԻ, ՈՐԴՈՑ| ՊԱՐՈՆ ՄԵԼՔՈՆԻՆ, ԹՈՌԻՆ ՄԵԾԻՆ| ՋԱՀՆՇԻՆ, ՅՈՒՈՎ, ՄԵՕԱԻ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶՍԲ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԳՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ|. ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՅԻՇԵՑԷՔ:

*Հրատ. Լալայան, XIX, 30։ Առաջին չորս տողերը սխալմամբ առանձնացրել և այլ հուշարձանի է վերագրել։ (Բիկոնրի մասը)։*
Լուսանկ. 305

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՏԵՂՈՒՄ ՉԿԱՆ

***1492. ԽԱՉՔԱՐ**, մեծ, 2,5 մետր բարձր. և մեկ մետր լայն. կանգնած է եղել եկեղեցու արևելքը, հին գերեզմանատան մեջ, վրան՝*

Կամաւն Աստուծոյ. ես Յուսէն կանգնեցի սուրբ նշանս ի փրկութիւն հոգւոյ Եղբաւր իմ Հաւիկա և այլոցն... ծնողաց իմոց, որք երկրպագէք խաչիս ի սուրբ յաղաւթս յիշեցէք. ի թվ. :ՉԽԴ: (1295):

*Հրատ. Լալայան, XIX, 29։*

***1493. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, օրորոցաձև, մի երեսին հեծյալ, գլխայր եղջերու՝ կանգնած վիշապի վրա և մի այլ մարդ՝ նույնպես վիշապի վրա կանգնած։ Մյուս երեսին սաղ նվագող՝ շուրջը զավ ու հացեր և շրջանակներին.*

Այս է հանգիստ Թաւպարին, որդի պարոն Ամիրչէնանին, թոռն մեծին Գրենանցին. թվ. :ՋՁԳ: (1534). փոխեցաւ առ Քս. որք հանդիպիք յիշեցէք ի Քս:

Մանր. *Անձնանունները, անշուշտ, աղավաղված են վերծանողի կողմից։*

*Հրատ. Լալայան, XIX, 30։*

***1494. ԽԱՉՔԱՐ**, կանգնած է եղել նույն հին գերեզմանատան մեջ. վրան.*

Սբ խաչս բարեխաւս Դավլին. կանգնեցաւ Ոստակէս քահանային և դստերց Խոքնին և Խնառոմին. թվին :ՌՃԷ:ին (1658):

Մանր. *Վերջին անունները աղավաղված են վերծանողի կողմից։*

*Հրատ. Լալայան, XIX, 30։*

***1495. ԵԿԵՂԵՑՈՒ** հարավային պատի վրա, արտաքուստ, երեսպատման երեք քարերի վրա եղել է ընդարձակ արձանագրություն.*

Կամաւք եւ ողորմութեամբ հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. արդ ես Յոհաննէս վարդապետս որդի Մելքոնին, որդւոյ Միրզաջանին, որդւոյ Ջանշահի, յորդւոյ Պաոսոյ, յորդւոյ Հասանայ որդւոյ մեծ Շահնշահի, որդւոյ Սարգսի, թոռնեայն Դոփայ, քոյր մեծին Իւանէի և սպասալար Զաքարէի, հանդերձ հարազատ եղբաւրորդւովի իմովք Աթանաս եպիսկոպոսիւ և Գրիգոր եպիսկոպոսիւ՝ յոյժ ջանիւ և մեծ յուսով և բազում փափագանաւք շինեցաք զսուրբ Աստուածածինս՝ բարեխաւս և փրկութիւն հոգւոց մերոց և ծնողաց իմոց Մելքոնին և Փաշանդին,

և բազմերախտ աստուածորդին իմոյ Յովհաննէս րաբունապետին, որոց ողորմի ասացէք՝ որք հանդիպիք աղաչեմ. Աստուած ողորմի ամենայն հաւատացելոց և մեզ և ծնողաց մերոց. ամէն։

Ծանոթ. *Լալայանի այցելած ժամանակ, 1910 թ. արձանագրության երեք քարերն ընկած են եղել պատի տակ. այժմ չկան։*

*Հրատ. Ջալալյանց, 114։ Ալիշան, 74։ Սմբատյանց, 628։ Լալայան, XIX, 29։*

## ԴԱՄԻՇԼՈՒ ԿԱՄ ԴԱՆԼՈՒ

*Գյուղի հին անունը հայտնի չէ. պահպանվել է միայն ընդարձակ գերեզմանատան մի մասը, ներկա խճուղու եզրին։ Այստեղ կան գեղաքանդակ խաչքարեր և կենցաղային քանդակներով տապանաքարեր. հները XVI դարից։*

*Մեր հավաքածուում ամփոփված են 25 արձանագրություն, որոնցից չորսն է եղել հրատարակված նախկինում։*

***1496. ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ**, երկու հատ, շատ մեծ, օրորոցաձև, գտնվում են գերեզմանատան կենտրոնում, պատկանում են մի ընտանիքի.*

*Ա. ՀԱՐԱՎԱՑԻՆ ԿՈՂԻՆ հեծյալ, ձեռքին կեռ գլխով մահակ, առջևին մի եղջերու և երկու գոմեշ, հյուսիսային կողին երեք խորան, մեկի մեջ ըմպելիք և դավ բռնած մարդ, կենտրոնում երկու ականջանի սազ նվագող ծալապատիկ նստած մարդ, առջևին հաց, երրորդի մեջ խաչ, հարավում, քանդակներից վեր և արևելյան ճակատին 7 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏ։Բ։ԵՂԲԱՐՑ
ԱՂԱՊԷԿԻՆՊԷ
ԿԻՃԱՆԻՆՈՐԵՆ
ՈՐԴԻՔՇԱՀ
ԻԿԻՆ

ԹՎ. ՋՁՁ

Թվ. ՋՁՁ (1537)| ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ։Բ։ ԵՂԲԱՐՑ|, ԱՂԱՊԷԿԻՆ, ՊԷ|ԿԻՃԱՆԻՆ, ՈՐ ԵՆ| ՈՐԴԻՔ ՇԱՀ|ԻԿԻՆ։

***1497. Բ. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂԻՆ** հեծյալ, որի առջևից փախչում է եղջերու, ոտների տակ օձեր, արևելյան ճակատին 7 տող.*

ԵՍՄԿԸՐ
ՏԻՉՍՈՐ
ԴԻՇԱՀԻ
ԿԻՆԿՆԿՍ
ԽՆԱՋԻՋ
ՊԷԿԻՆԹՎ
ՌԺԳ

ԵՍ ՄԿԸՐ|ՏԻՉՍ ՈՐ|ԴԻ ՇԱՀԻ|ԿԻՆ ԿԱՆԿՆԵՑԻ ՍԲ.| ԽԱՉՍ ԱՋԻՋ| ՊԷԿԻՆ. ԹՎ.| ։ՌԺԳ։ (1564)։

Ծանոթ. *Այս զույգ տապանաքարերի գլխին մնում է մի մեծ խաչքարի պատվանդան՝ երկու փոսերով։*

***1498. ԽԱՉՔԱՐ**, մեծ գեղաքանդակ, գտնվում է գերեզմանատան կենտրոնում, քիվին և խաչի տակ 2 տող.*

ԽՉՍԲԱՐԷԽՍ·ԱՏԻՍԻՆ·ՈՐԷՄԱ
ՅՐՄԷԼՔՈՆԻՆԵԱՌԱՋՆՈՐԴԻ

ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԱՏԻՍԻՆ, ՈՐ Է ՄԱ|ՅՐ ՄԷԼՔՈՆԻՆ. ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ [ԳԵՂՈՅՍ]...։